

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ
ԴՊՐՈՑ» ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «2016-
2017» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Հ Ա Շ Կ Ե Տ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նախագիծ

Հաստատության գործունեության ներքին գնահատման հաշվետվության ձևի պատրաստման մեթոդական երաշխավորություններ

1.1 Նախաբան

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի զարգացման քաղաքականության մեջ առանցքային տեղ է գրավում ուսումնական հաստատությունների գործունեության գնահատումը և սովորողների ուսումնառության վերջնարդյունքների բարելավման ուղղությամբ կատարվող աշխատանքները: Հատկապես որոշակի քայլեր են կատարվում չափելի վերջնարդյունքներ սահմանելու ուղղությամբ: Դրա վկայությունը 2009 թվականի հուլիսի 10-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում առաջին անգամ սահմանված հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին և արտաքին գնահատում իրականացնելու պահանջն է: Ելնելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ ՀՀ կառավարությունը 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N1334-Ն որոշմամբ հաստատել է «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանշների սահմանման և իրականացմանը կարգը»: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն հստակորեն սահմանվել և տարանջատվել են ուսումնական հաստատության գործունեության վերահսկողությունը (հոդված 33) և ուսումնական հաստատության գործունեության գնահատումը (հոդված 34):

Հաստատության գործունեության ներքին գնահատումը բխում է ոչ միայն ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրությամբ սահմանված պահանջներից, այլ նաև համահունչ է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ու ՀՀ կրթության և գիտության նախարարության համագործակցության շրջանակներում իրականացվող «Երեխայակենտրոն դպրոց» ծրագրի հայեցակարգային դրույթներին:

1. 2. **Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության ներքին գնահատման նպատակը և խնդիրները**

Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) ներքին գնահատման գործընթացը հաստատության կրթական ծառայությունների որակի մշտադիտարկման և ընթացիկ հսկողության գործառույթ է, որն իրականացնում է հենց կրթական ծառայություններ մատուցողը՝ հաստատության, ուսումնական գործընթացի որակի հետագա բարելավման նպատակով: Ըստ էության, ներքին գնահատումը ուսումնական հաստատության կողմից իր գործունեության վերլուծությունն է («Հանրակրթության մասին» ՀՀ օրենք հոդված 34):

Ներքին գնահատումը հստակ կազմակերպված, նպատակաուղղված և պարբերական գործունեություն է՝ ուղղված ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսուցիչների աշխատանքի արդյունավետության և սովորողների առաջընթացի

ուսումնասիրմանը՝ հաստատության հետագա գործունեությունը բարելավելու նպատակով:

Հաստատության գործունեության ներքին գնահատման նպատակն է՝

ուսումնական հաստատության գործունեության, մատուցվող կրթական ծառայությունների որակի բարելավումը և արդյունավետության բարձրացումը:

Հաստատության ներքին գնահատման խնդիրներն են՝

ա) հաստատության կողմից մատուցած կրթական ծառայությունների որակի գնահատումը.

բ) շահառուների՝ սովորողների և նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների), հաստատության մանկավարժական աշխատողների, ՀՀ կրթության և գիտության նախարարության, պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կրթության հիմնարկներով զբաղվող կազմակերպությունների, ինչպես նաև հասարակության հաստատությունների գործունեության վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացումը և առանձին հաստատությունների մասին ամբողջական տեղեկատվության տրամադրումը.

գ) հաստատության հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետության բարելավումը և գործունեության թափանցիկության բարձրացմանը.

դ) հաստատության զարգացման ծրագրերի մշակման խթանումը.

ե) հաստատության գործունեության գնահատման գործընթացում վարչական և մանկավարժական աշխատողների, սովորողների և ծնողների ներգրավումը:

Համաձայն <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի ներքին գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ներքին գնահատմանը մասնակցում են հաստատության վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և նրանց ծնողները (օրինական ներկայացուցիչները): Ներքին գնահատումն իրականացվում է հաստատության տնօրենի հրամանի համաձայն ձևավորված հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ներկայացուցիչներ հաստատության կոլեգիալ կառավարման մարմնից, մանկավարժական և ծնողական խորհուրդներից:

Հաստատության տնօրենը հանձնաժողովի նախագահն է և ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը: Հանձնաժողովը հաստատում է իր աշխատակարգը, սահմանում ներքին գնահատում անցկացնելու գործողությունների ծրագիրը, մեթոդները և ժամանակացույցը:

Ներքին գնահատման հաշվետվությունը տնօրենը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ը ներկայացնում է ուսումնական հաստատության խորհրդին,

ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև ապահովում դրա հրապարակումը:

1.3. Հաստատության ներքին գնահատման գործընթացի իրականացումը և հաշվետվության պատրաստման մեթոդական երաշխավորություններ

Հաստատության ներքին գնահատման հաշվետվության պատրաստման ժամանակ անհրաժեշտ է առաջնորդվել սույն մեթոդական երաշխավորություններով և սույն փաստաթղթի բաժին 2-ում տրված հաշվետվության ձևով:

Հաշվետվության պատրաստման համար հիմք են հանդիսանում հաստատության ներքին գնահատման ցուցանիշները, հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների կողմից հաստատության գործունեության այս կամ այն ոլորտի վերաբերյալ տրված գնահատումները: Հաստատության գործունեության ներքին գնահատման գործընթացը ներառում է երեք բաղադրիչ՝

1. մեկնարկային պայմանների (ռեսուրսների) գնահատում.
2. գործընթացի գնահատում.
3. արդյունքների գնահատում:

Վերը նշված բաղադրիչներից յուրաքանչյուրը գնահատվում է ըստ հաստատության գործունեությունը նկարագրող հետևյալ ոլորտների.

- հաստատության անվտանգություն,
- հաստատության գործունեության արդյունավետություն և ուսումնական գործընթացի որակ,
- հաստատությունում ներառական կրթության և գենդերային հավասարության ապահովում,
- համայնքային մասնակցություն:

Վերոնշյալ 4 ոլորտների համար սահմանված են գնահատման ցուցանիշներ: Յուրաքանչյուր ցուցանիշի համար նշված է գնահատման ձևը, մեթոդը, պարբերականությունը և հաշվարկման մեթոդաբանությունը: Բոլոր 4 ոլորտների գնահատման ցուցանիշների ամբողջական ցանկը տրված է **Հավելված 1-ում**:

Հաշվետվության ձևի լրացման ընթացքում ցուցանիշների ճիշտ կիրառությունը՝ հիմնված տեղեկատվության հավաքագրման և վերլուծության բազմակի մեթոդների վրա՝ հաստատության գործունեության ինքնավերլուծության որակի հիմնական գրավականն է: Այստեղ առաջարկվող ցուցանիշներից յուրաքանչյուրը հանդիսանում է գնահատման մեթադաբանության բաղկացուցիչ և հիմնված է տեղեկությունների և տվյալների հավաքագրման, վերլուծության ուրույն մեթոդի վրա:

Ցուցանիշների գնահատման ժամանակ կիրառվում են հետևյալ մեթոդները.

- Վիճակագրական տվյալների վերլուծություն
- Փաստաթղթային վերլուծություն,
- Դիտարկումն փաստագրում,
- Հարցում:

Որոշ ցուցանիշների հաշվարկման համար կիրառվում են նաև համակցված մեթոդներ:

Վիճակագրական տվյալների վերլուծությունը ենթադրում է՝

- Վիճակագրական տվյալների կարգավորում և ներկայացում աղյուսակների, սխեմաների և գրաֆիկների միջոցով, այնուհետև եզրահանգումների և կանխատեսումների կատարում:

Փաստաթղթային վերլուծությունը ենթադրում է՝

Հաստատության գործունեությունն ապահովող ներքին փաստաթղթերի, վիճակագրական տվյալների և հաշվետվությունների ուսումնասիրություն, արդյունքների արձանագրում և եզրակացությունների կազմում:

Դիտարկումը կամ փաստագրումը ենթադրում է՝

ըստ սահմանված ցուցանիշների՝ հաստատության մարդկային, նյութական, ֆինանսական ռեսուրսների առկայության (կամդրանց բացակայության), ուսումնասիրվող գործընթացների և ընթացակարգերի մասին արձանագրում կամ նկարագրում՝ աղյուսակների, դիտարկման քարտերի և գրանցման այլ միջոցներով: Դիտարկման միջոցով ստացվող տեղեկատվությունը բազմաբնույթ և օգտակար է ոչ միայն ինքնավերլուծության, այլ նաև հաստատության գործունեությունը լիարժեք ներկայացնելու համար:

Հարցումների անցկացումը ենթադրում է՝

Հարցազրույցների անցկացում հարցվողների ներքոհիշյալ խմբերի հետ՝ կախված ուսումնասիրվող ցուցանիշի բնույթից և նպատակից.

- տնօրեն և վարչական աշխատողներ,
- ուսուցիչներ,
- հաստատության սպասարկող անձնակազմ,
- ծնողներ,
- սովորողներ:

Հարցման միջոցով հնարավոր է դառնում այնպիսի հարցերի պարզաբանումը, որոնք տարածվածության խնդիր են դնում բացահայտել տարբեր հարցվող խմբերի կարծիքը ուսումնասիրվող ցուցանիշների վերաբերյալ:

Հարցազրույցների անցկացման հիմնական նպատակն է ստանալ խորքային տեղեկատվություն խնդրո առարկայի վերաբերյալ, որը թույլ է տալիս ի հայտ բերել ուսումնասիրվող երևույթի այնպիսի կողմեր, ինչպիսիք են շահատուների բավարարվածությունը դրանից առկա հիմնախնդիրները, թերությունները և այլն:

Հաշվետվության կառուցվածքը

Այն պետք է բաղկացած լինի 6 մասից:

- Մաս 1-ը ներառում է ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին: Այստեղ հիմնականում արձանագրվում են հաստատության գործունեությունը նկարագրող վիճակագրական տվյալներ, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ կրթության և գիտության նախարարության <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին>> հաշվետվության մեջ ներառվող տեղեկատվությանը: Հաշվետվության մեջ տեղ գտած վիճակագրական տվյալները, հաստատության գործունեության վերաբերյալ այլ տեղեկատվությունը անհրաժեշտ է գնահատել ինչպես տվյալ ուսումնական տարվա կտրվածքով, այնպես էլ նախորդ 3 տարիների հետ համեմատության մեջ՝ բացահայտելով այս կամ այն ոլորտը նկարագրող ցուցանիշների դինամիկան:
- Մաս 2-րդ ում ներկայացվում են հաստատության անվտանգությունը գնահատող ցուցանիշները:
- Մաս 3-րդում ներկայացվում են հաստատության գործունեության արդյունավետությունը գնահատող ցուցանիշները:
- Մաս 4-րդում ներկայացվում են հաստատությունում ներառական կրթություն, գենդերային հավասարության ապահովումը գնահատող ցուցանիշները:
- Մաս 5-րդում ներկայացվում են համայնքային մասնակցությունը գնահատող ցուցանիշները:
- Մաս 6-րդում ներկայացվում են հաստատության հիմնախնդիրները, դրանց հաղթահարման ուղիները: Առանձին տեղ է հատկացված նաև առաջարկությունների համար:

Բոլոր ոլորտների ցուցանիշները, դրանց գնահատման մեթոդաբանությունը տրված է **Հավելված 1-ում**: Համապատասխան աղյուսակների, հարցերի միջոցով յուրաքանչյուր մասում ներկայացվում են այն ցուցանիշները, որոնք պետք է գնահատվեն կամ վերլուծվեն: Նշված է նաև, թե հատկապես ինչ մեթոդով պետք է դա իրականացնել:

Հարցումների իրականացման երաշխավորվող մեթոդաբանությունը տրված է Հավելված 2-ում:

Անհրաժեշտության դեպքում այս կամ այն ցուցանիշի մասին կարելի է տալ ավելի ամբողջական տեղեկատվություն:

Հաճախ միևնույն ցուցանիշը կարող է բացահայտվել և՛ փաստաթղթերի ուսումնասիրության, և՛ հարցման միջոցով, ուստի ժամանակ և միջոցներ խնայելու համար երաշխավորվում է այդպիսի ցուցանիշների արձանագրման միասնական փաստաթղթային և հարցման միջոցով արդյունքների ամփոփման ձև:

Ցուցանիշների արձանագրման վերոնշյալ միասնական ձևի կիրառումը չի բացառում ցուցանիշների առանձին-առանձին արձանագրումը: Կարևոր է հանգամանակից և օբյեկտիվ, հավաստի վերլուծության ապահովումը: Այսպիսով, յուրաքանչյուր հաստատություն իր նախասիրությամբ կարող է կիրառել տարբեր մոտեցումներ:

Հաշվետվության ձևի մեջ ներկայացված տեղեկատվությունը պետք է լինի ամբողջական, համապարփակ և օբյեկտիվորեն արտացոլի հաստատության առկա վիճակը, փոփոխությունների ընթացքը և ուղղությունները: Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է կատարել որակական և քանակական վերլուծություն, ցանկալի է տեղեկատվությունը ներկայացնել աղյուսակային, գրաֆիկական և այլ հնարավոր ձևերով:

Հաշվետվության ձևում անհրաժեշտ է նկարագրել նաև հաստատությունում առկա հիմնախնդիրները և դրանք լուծելու այնպիսի եղանակները, որոնք հիմնված են իրական հնարավորությունների վրա:

- Հաշվետվության մեջ տեղ գտած ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն պետք է հիմնված լինի հիմնավոր փաստերի վրա, լինի տրամաբանական և հակիրճ, իսկ ոճը՝ պաշտոնական:

Որակյալ ու պիտանի հաշվետվություն պատրաստելու գլխավոր երաշխիքը հաստատության վարչական աշխատողների և մանկավարժական կոլեկտիվի համագործակցային և թիմային աշխատանքն է, համատեղ որոշումների կայացումն ու իրագործումը:

Մաս 1. Ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին

Հաստատության անվանումը, համարը՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի թիվ 1 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Հաստատության հասցեն՝ **ք. Գավառ, Միքայելյան 27**

Հեռախոս, էլ. հասցե՝ /0264/2-43-08, gavar1htd@schools.am

<< Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի թիվ 1 հատուկ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ դպրոց/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող տարրական, և հիմնական հատուկ հանրակրթական ընդհանուր ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է :

2016-2017 ուսումնական տարում դպրոցն իր գործունեությունն իրականացրել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի որոշումների ու կարգադրությունների, ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանների պահանջների, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության հանձնարարականների, մանկավարժական խորհրդի և տնօրենի հրամանով հաստատված ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի համաձայն, ղեկավարվել օրենսդրությամբ, դպրոցի կանոնադրությամբ, կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի հաստատված <<Ներքին կարգապահական կանոններ>>-ով, խորհրդի հավանության արժանացած դպրոցի զարգացման ծրագրով :

Աղյուսակ 1. Դասարանների թիվը՝ ըստ կոմպլեկտավորման

1-ին կիսամյակի սկիզբ

h/h	Դասարանը	դաս. թիվը	աշակերտների թիվը			որ դասարանի հետ է երկկոմպլեկտ	որ դասարանի հետ է եռակոմպլեկտ	ծանոթություն
			ընդամենը	տղա	աղջիկ			
1	I	0.5	1	-	1			
2	II	0.5	4	1	3			
3	III	0.5	2	2	-			
4	IV	0.5	1	1	-1			
5	ընդամենը I-IV	2	8	4	4			
6	V	1	4	2	2			
7	VI	1	8	6	2			
8	VII	1	9	6	3			
9	VIII	1	5	5	-			
10	IX	1	6	2	4			

11	ընդամենը V-IX	5	32	21	11			
12	X	-	-	-	-			
13	XI	-	-	-	-			
14	XII	-	-	-	-			
15	ընդամենը՝ X-XII	-	-	-	-			
16	ընդամենը՝ I-XII	7	40	25	15			

2-րդ կիսամյակի սկիզբ

h/h	Դասարանը	դաս. թիվը	աշակերտների թիվը			որ դասարանի հետ է երկկուսակց տ	որ դասարանի հետ է եռակուսակց	ծանոթու թյուն
			ընդամ ենը	տղա	աղջիկ			
1	I	0.5	3	2	1			
2	II	0.5	4	1	3			
3	III	05	2	2	-			
4	IV	0.5	2	1	1			
5	ընդամենը I-IV	2	11	6	5			
6	V	1	4	2	2			
7	VI	1	8	6	2			
8	VII	1	9	6	3			
9	VIII	1	5	5	-			
10	IX	1	6	2	4			
11	ընդամենը V-IX	5	32	21	11			
12	X	-	-	-	-			
13	XI	-	-	-	-			
14	XII	-	-	-	-			
15	ընդամենը՝ X-XII	-	-	-	-			
16	ընդամենը՝ I-XII	7	43	27	16			

Աղյուսակ 3.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑԻ 2016-2017 ՈՒՍ. ՏԱՐՎԱ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՇԱՐԺԻ և ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

h/h	դասառանդ	Դասառանդների թիվը	Աշակերտների թիվը I կիսամյակի սկզբին	Ընդունվել են կիսամյակի ընթացքում				տեղափոխվել են կիսամյակի ընթացքում				Դպրոցը թողել կամ ազատվել են		Աշակերտների թիվը I կիսամյակի վերջում	Չեն գնահատվել	Գնահատվել են՝ այդ թվում				Անբավարար գնահատականունեն					
				Գեղարքունիքի մարզի այլ դպրոցներից	Հանրապետության այլ մարզերի դպրոցներից	Այլ հանրապետությունների դպրոցներից	Այլ ուսումնական հաստատություններից	Մյուս դպրոցի մարզված կամ սպասարկման տարածքի աշակերտներից	Գեղարքունիքի մարզի այլ դպրոցներ	Հանրապետության այլ մարզերի դպրոցներ	Այլ հանրապետությունների դպրոցներ	Այլ ուսումնական հաստատություններ	Հարգելի պատճառով			Անհարգելի պատճառով	Ընդամենը	Գերազանցիկներ	հարվածայիններ	միջակներ	ընդամենը	Մեկ կամ երկու առարկաներից	Երեք և ավելի առարկաներից		
1.	I	0.5	1					2							3	3									
2.	II	0.5	4												4		4			4					
3.	III	0.5	2												2		2			2					
4.	IV	0.5	1	1											2		2			2					
5.	Ընդ I-IV	2	8	1				2							11	3	8			8					
6.	V	1	4					1	1						4		4			4					
7.	VI	1	8												8		8			8					
8.	VII	1	9												9		9			9					
9.	VIII	1	5												5		5			5					
10.	IX	1	6												6		6			6					
11.	Ընդ V-IX	5	32					1	1						32	-	32	-		32					
12.																									
13.																									
14.																									
15.	Ընդ	7	40	1				3	1						43	3	40			40					

Որակը՝ 0 %
առաջադիմությունը՝ 100 %

Աղյուսակ 4.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑԻ 2016-2017 ՈՒՍ. ՏԱՐՎԱ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՇԱՐԺԻ և ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

h/h	դասարանը	Դասարանների թիվը	Աշակերտների թիվը I կիսամյակի սկզբին	Ընդունվել են կիսամյակի ընթացքում				տեղափոխվել են կիսամյակի ընթացքում				Դպրոցը թողել կամ ազատվել են		Աշակերտների թիվը I կիսամյակի վերջում	Գնահատվել են՝ այդ թվում				Իգիտություն ղեկավարողի	դասընթացը կրկնում են պատճառը		
				Գեղարքունիքի մարզի այլ դպրոցներից	Հանրապետության այլ մարզերի դպրոցներից	Այլ հանրապետությունների դպրոցներից	Այլ ուսումնական հաստատություններից	Մյուս դպրոցից մղված կամ սպասարկման տարածքի աշակերտներից	Գեղարքունիքի մարզի այլ դպրոցներ	Հանրապետության այլ մարզերի դպրոցներ	Այլ հանրապետությունների դպրոցներ	Այլ ուսումնական հաստատություններ	Հարգելի պատճառով		Անհարգելի պատճառով	Ընդամենը	Գերազանցիկներ	Խաղվածախիներ		միջակներ	անբավարար ունեն մեկ կամ երկու առարկայից	200 ժամից ավելի բացակայություն
1.	I	0.5	3											3					3			
2.	II	0.5	4											4	4			4				
3.	III	0.5	2											2	2			2				
4.	IV	0.5	2											2	2			2				
5.	Ընդ I-IV	2	11											11	8			8	3			
6.	V	1	4											4	4			4				
7.	VI	1	8											8	8			8				
8.	VII	1	9											9	9			9				
9.	VIII	1	5											5	5			5				
10.	IX	1	6											6	6			6				
11.	Ընդ V-IX	5	32											32	32			32				
12.																						
13.																						
14.																						
15.	Ընդ	7	43											43	40			40	3			

Որակը՝ 0 %
առաջադիմությունը՝ 100 %

Վերլուծել փոփոխությունները և կատարել եզրահանգումներ

- 2016-2017 ուստարում 9 ընդհանուր դասարանն ավարտել է 6 աշակերտ, որը ստացել է հիմնական կրթության վկայական:
- 2016-2017 ուստարում աշակերտների թիվը ավելացել է 3-ով:

Աղյուսակ 5. Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ ըստ 3 ուստարիների

Ցուցանիշը	2013-2014	2014-2015	2015-2016	2016-2017
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ ընթացիկ տարվա հոկտեմբերի 5-ի դրությամբ	54	58	38	40
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ ընթացիկ տարվա մայիսի 25-ի դրությամբ	53	45	40	43
Ուս.տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	5	2	2	3
Սովորողների բացակայությունների թիվը ժամերով՝ հաստատության բոլոր դասարանների դասամատյաններում գրանցված բացակայությունների ընդհանուր թիվը արտահայտված ժամերով	-	-	-	-
Երկտարեցիների թիվը	-	-	-	-
Ուս.տարվա ընթացքում ուսումն	4	14	-	1

ընդհատած սովորողների թիվը				
Այդ թվում՝				
—հիվանդության պատճառով	4		1	
—այլ հաստատություններ տեղափոխման պատճառով		13	1	1
—հեռացման պատճառով		1		

Աղյուսակ 8. Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ

Ցուցանիշը	2013-2014	2014-2015	2015-2016	2016-2017	Բեկնաբանությունը
Ուսուցիչների ընդհանուր թիվը	18	18	16	16	
Ուսուցիչների բացակայությունների թիվը (ուստարվա ընթացքում հաստատության բոլոր ուսուցիչների բացակայած օրերի ընդհանուր թիվը)	-	-	-	-	
Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը	18	18	16	16	
Վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը	5	5	5	4	
Ամացանցի կրթական կայքերից օգտվող ուսուցիչների թիվը	18	18	16	16	

Լրացուցիչ

մեկնաբանություններ

Աղյուսակ 9. Տվյալներ մանկավարժների տարիքային բաշխվածության վերաբերյալ

Մանկավարժների թիվը	2013-2014	2015-2016	2016-2017
Մինչև 25 տարեկան	1	-	-
25- 29 տարեկան	1	1	1
30-34 տարեկան	1	1	1
35-39 տարեկան	1	2	1
40-44	4	4	2
45-49	4	3	3
50-54	2	3	4
55-59	6	6	3
60-64	3	2	3
65 և ավելի	3	4	5

Աղյուսակ 10. Տվյալներ հաստատության հիմնական ցուցանիշների վերաբերյալ

Ցուցանիշներ	2014-2015	2015-2016	2016-2017	Մեկնաբանություն
Ուսուցիչների թիվը	18	16	16	
Մանկավարժների թիվը	30	23	23	
Սպասարկող անձնակազմի թիվը	31	32	32	
Սովորողների թիվը	58	38	43	

Աղյուսակ 11. Տվյալներ հաշվետվության լրացման պահին հաստատության ղեկավար կազմի վերաբերյալ

Անունը, ազգանունը, հայրանունը	Պաշտոնը	Տվյալ պաշտոնում աշխատելու խամանակահատվածը	Տվյալ հաստատությունում աշխատելու խամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Լարիսա Լյուդվիգի Զազյան	տնօրեն	5 տարի	5 տարի	
Հասմիկ Պապինի Մարուխյան	Տնօրենի ուսումնական գծով տեղակալ	19 տարի	41 տարի	

Աղյուսակ 12 Տվյալներ հաստատության կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ

Անուն, ազգանուն,	Ծննդյան թիվ	Կրթություն	Ում կողմից է առաջադրվել	Աշխատավայրը և պաշտոնը
Մալխասյան Էլյանորա	1977	բարձրագույն	Մարզպետարանի կրթության բաժին	Գավառի պետական երաժշտական քոլեջի տնօրեն
Պողոսյան Վահե	1984	բարձրագույն	Մարզպետարանի կրթության բաժին	ՀԵՀ
Բրսիկյան Տիգրան	19	բարձրագույն	ՏԻՄ	Գավառի քաղաքապետարան
Դվոյան Սևակ	1975	բարձրագույն	Մարզպետարանի	Ա.Ա.Ա. վարչության պետի տեղակալ
Զաքոյան Սիրանուշ	1974	բարձրագույն	Մանկավարժ. ստրիուրդ	Գավառի թիվ 1 հատուկ դպրոց

				դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ
Հովեյան Լուսիկ	1972	միջին մասնագ.	Մանկավարժ. խորհուրդ	Գավառի թիվ 1 հատուկ դպրոց դաստիարակ
Մելիքսեթյան Նարինե	1974		Ծնողական խորհուրդ	Ծնող Կանխարգելիչ աղտահանում
Հարությունյան Սարիամ	1977	փժնակարգ	Ծնողական խորհուրդ	Ծնող

Առաջարկություններ խորհրդի գործունեության և կազմի վերաբերյալ

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվել են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական խորհուրդներ:

Դպրոցի կառավարման, մանկավարժական, ծնողական խորհուրդները գործում են իրենց կանոնադրություններին համապատասխան, ակտիվ մասնակցում են դպրոցի կառավարման աշխատանքներին: Մասնակցում են դպրոցի բյուջեի ձևավորմանը և քննարկմանը, աշակերտների առաջադիմության վերլուծություններ են կատարում:

Մանկավարժական խորհուրդը ձևավորվել է տնօրենի 29.08.2017թ. թիվ 46-Լ հրամանով:

Ուսումնադաստիարակչական գործընթացն իրագործվել է պետական չափորոշիչներով, ուսումնական առարկայական ծրագրերին համապատասխան ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված դասագրքերով, ինչպես նաև ուսումնաօժանդակ համապատասխան պարագաներով և այլ նյութերով:

Ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար համակարգված վերահսկողություն է իրականացվել սովորողների կողմից հանրակրթական պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի բովանդակության յուրացումն ապահովելու ուղղությամբ :

Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակի, ուսումնական առարկաների դասավանդման վիճակն ուսումնասիրելու ուսուցիչների մեթոդական պատրաստվածությունն ստուգելու և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով կատարվել են փոխադարձ դասալսումներ, բաց դասեր: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ դասավանդող ուսուցիչները կարողանում են կատարել ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրություն, համադրել բազմազան մեթոդներ, ապահովել և՛ դասարանում, և՛ դասաժամից դուրս սովորողի գործուն մասնակցությունն ուսումնական գործընթացին:

Դպրոցում դասապրոցեսի կազմակերպման համար կաբինետները ապահովվել են անհրաժեշտ պայմաններով: Ուսուցիչներին դասը արդյունավետ կազմակերպելու համար տրվել են դիդակտիկ և օժանդակ նյութեր:

Դասապրոցեսի արդյունավետությունը պարզելու համար տնօրենի, տնօրենի տեղակալի , ՄՄ նախագահների և ուսուցիչների կողմից կազմակերպվել են բազմաթիվ դասալսումներ:

Աշակերտների հմտությունների և կարողությունների զարգացմանը ուղղված կազմակերպվել են խմբակներ, որին աշակերտները բավական ակտիվ մասնակցել են

Աղյուսակ 13. 2014-2015 ուս տարվա խմբակներ

Խմբակների անվանումը	Խմբակում ընդգրկված երեխաների թիվը	Ժամերի քանակը	Պարապմունքի շաբաթվա օրերը և ժամը	Խմբավարի անունը ազգանունը,	Խմբավարի որակավորումը ըստ դիպլոմի
կերպարվեստ	20	18	երկուշաբթի 12:30-16:10 երեքշաբթի 12:30-16:10 չորեքշաբթի 12:30-16:10	Ամալյա Ալմոյան	տարրական դասարանների

			հինգշաբթի 12:30-16:10 ուրբաթ 12:30-16:10		ուսուցչուհի
Խեցեգործություն	9	2	ուրբաթ 15:30-17:00	Հարություն Դադոյան	Ֆիզիկայի և աստղագիտության և ուսուցիչ
Կոշկակարություն	8	2	երեքշաբթի 15:20-16:05 հինգշաբթի 15:20-16:05,	Ռուբեն Սարգսյան	Տեխնոլոգիայի և կիրառական տնտեսութ. ուսուցիչ

Աղյուսակ 14. 2015-2016 ուս տարվա խմբակներ

Խմբակների անվանումը	Խմբակում ընդգրկված երեխաների թիվը	Ժամերի քանակը	Պարապմունքի շաբաթվա օրերը և ժամը	Խմբավարի անունը ազգանունը,	Խմբավարի որակավորումը ըստ դիպլոմի
Կերպարվեստ	20	18	երկուշաբթի 12:30-16:05 երեքշաբթի 12:30-16:05 չորեքշաբթի 12:30-16:05 հինգշաբթի 12:30-16:05 ուրբաթ 12:30-16:05	Ամալյա Ալմոյան	տարրական դասարանների ուսուցչուհի
Խեցեգործություն	9	2	չորեքշաբթի 15:20-16:05 հինգշաբթի 15:20-16:05	Հարություն Դադոյան	Ֆիզիկայի և աստղագիտության և ուսուցիչ
Կոշկակարություն	8	2	չորեքշաբթի 14:15-15:00, 15:20-16:05	Ռուբեն Սարգսյան	Տեխնոլոգիայի և կիրառական տնտեսութ. ուսուցիչ

Դպրոցի տարեկան պլանով նախատեսված են եղել ուսումնական և դաստիարակչական միջոցառումներ.

1. Դասասենյակների նախապատրաստում նոր ուսումնական տարվան
2. Թեմատիկ պլանների կազմում և հաստատում
3. «Առաջին զանգ» միջոցառումը, դասարաններում նշել գիտելիքի օրը
4. Էքսկուրսիաներ
 - ա/ Գավառի երկրագիտական թանգարան
 - բ/ պատկերասրահ
 - գ/ հանրապետության տարբեր վայրեր և քաղաքներ
5. միջոցառում նվիրված Անկախության օրվան «Անկախ Հայաստան» խորագրով
6. Կազմակերպել «Ուսուցչի տոն»
7. Կազմակերպել «Աշնան գույներ» մրցույթ միջոցառում
8. Ամանորյա ցերեկույթներ
9. Հայկական ավանդական տոներին նվիրված միջոցառումներ, ցերեկույթներ, բեմականացում
 - ա/ Նոր տարի
 - բ/ Սուրբ ծնունդ
 - գ/ Միջինք
 - դ/ Սուրբ Հարություն
 - ե/ Տիտն ընդ առաջ
10. «Հայոց բանակ, հզոր բանակ» խորագրով միջոցառում սպորտլանդիա
11. Բաց դաս Հ. Թումանյանի հեքիաթները
12. «Ոսկեղենիկ հայոց լեզու» ինտերակտիվ դաս
13. Գրական-երաժշտական ցերեկույթ «Մայրիկ այսօր տոնն է քո»
14. Բաց դաս «Գարնանամուտ»
15. Մեր ցավը 101 տարեկան է
16. Տառադարան
17. Ազգային տարազների պատրաստում
18. Պատի թերթերի, բացիկների մրցույթ նվիրված տոնական օրերին
19. Անցկացնել միջդասարանային սպորտային մրցույթներ.
 - ա/ շախմատ
 - բ/ ֆուտբոլ

20. Մաքուր պահենք մեր շրջապատը, իրականացնել ծառերի խնամք

21. Վերջին գանգ

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպված տարաբնույթ միջոցառումները նպատակաուղղվել են ոչ միայն սովորողների կրթության ապահովմանը, այլև դաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Մաս 2. Հաստատության անվտանգությունը

Առողջապահության համաշխարհային կազմակերպության բնորոշման համաձայն՝ առողջությունը ոչ միայն հիվանդությունների բացակայությունն է, այլև անձի հոգևոր, ֆիզիկական, կենսաբանական, սոցիալական լիարժեք բարեկեցությունը: Աճող սերնդի հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը հանրակրթության գլխավոր նպատակներից է և հաստատության խնդիրն է՝ ապահովել անվտանգ ուսումնական գործընթացի իրականացում:

Հաստատության գործունեության լիարժեք, համակողմանի գնահատման գործընթացը ներառում է ուսումնական միջավայրի անվտանգության գնահատումը, որը վերաբերում է ոչ միայն սովորողների անվտագ կենսագործունեությանը, այլ նաև ուսուցիչների և վարչական անձնակազմի համար աշխատանքի ու կյանքի համար անվտանգ պայմաններ ապահովելուն: Հաստատությունում սովորողներն ակտիվ կենսագործունեության ընթացքում կարող են հայտնվել վտանգավոր, արտակարգ իրավիճակներում, բախվել ամենատարբեր պատահարների, վթարների կամ աղետների հետ:

Հաստատության ներքին գնահատման գործընթացում անվտանգությանը և ապահովությանը վերաբերող ցուցանիշների ներառումը ենթադրում է, որ հաստատությունը պետք է գնահատի սովորողների ֆիզիկական և հոգեկան առողջությանը սպառնացող առկա և հնարավոր վտանգները, միաժամանակ քայլեր ձեռնարկի դրանք վերացնելու ուղղությամբ: Հաստատությունում անվտանգության ապահովումը չի հանդուրժում սպասողական, կրավորական, պասիվ կեցվածք, այլ պահանջում է ակտիվ նախաձեռնողական աշխատանք:

Հաստատությունում սովորողների անվտանգ կենսագործունեության և առողջության պահպանման գնահատման ցուցանիշները հետևյալներն են.

2.1. Հաստատությունը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը

1. Հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար:
2. Հաստատության տարածքը գտնվում է ավտոճանապարհային գոտուց բավարար հեռավորության վրա:
3. Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին:
4. Հաստատության տարածքը մաքուր է:
5. Հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար միջոցառումներ են իրականացվում կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ:

2.2. Հաստատության շենքի և դրա շահագործման անվտանգությունը նկարագրող ցուցանիշներ

Դպրոցին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված շենքերի (գույքի) շահագործումը և պահպանումը կատարվում է սահմանված կարգով, առաջող թերությունները արագ վերացվում են:

Դպրոցում պահպանվում են հրշեջ անվտանգության կանոնները: Բոլորը՝ անձնակազմը և աշակերտները ծանոթ են անվտանգության պահպանման կանոններին և հետևում են այդ պահանջներին:

- Շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր,
- հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով,
- շենքի աստիճանների լայնությունը և դռների բացվածքը համապատասխանում է պահանջվող նորմատիվներին, դրանք հարմարեցված են հաշմանդամ սովորողների պահանջներին,
- շենքը հարմարացված է հատուկ կարիքներ ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժմանը և ուսուցմանը,
- առկա են ազատ տեղաշարժի ապահովող պայմաններ. լայն դռներ, թեք հարթակներ, վերելակ և այլն,
- հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային, անվտանգության լրակազմով,
- հաստատության տանիքը պատված է հրակայուն նյութերով:

2.3. Դիտարկում-փաստագրում սովորողների և աշխատակազմի տարհանումը նկարագրող ցուցանիշները.

- հաստատությունում մշակված է սովորողների և անձնակազմի տարհանման պլան,
- հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցալաքներով,
- տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով,
- հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, բարվոք վիճակում է:

2.4 . Հաստատության նախագծային հզորությունը նկարագրող ցուցանիշներ

Հաստատությունը պահպանում է իր նախագծային հզորությունը

1. Հաստատությունում սովորողների թիվը համապատասխանում է հաստատության նախագծային հզորությանը՝ ըստ լիցենզիային կից սահմանված թվի:
2. Դասասենյակների նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում է նախագծային և սահմանված նորմերին:
3. Հաստատության մարզադահլիճը վերանորոգվել է բարերարների կողմից, տրամադրվել է մարզագույք:
4. Դպրոցն ունի վերելակ, որն ապահովում է հենաշարժողական խնդիրներ ունեցող սովորողների ազատ տեղաշաժը ամբողջ դպրոցով:

Աղյուսակ 15. Տվյալներ յուրաքանչյուր դասասենյակում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ

Ամսաթիվ	Դասասենյակի թիվ	Դասասենյակի ֆակերետը (քմ)	Սեղան-նստարանների դասավորվածության տեսակը (շարքերով, շրջանաձև, T-աձև, Ո-աձև, խառը)	Սեղան-նստարանների թիվը	Սեղան-նստարանների հեռավորությունը միմյանցից
29.08.2017	19	5899	շարքերով		40-50սմ

